

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 18-Ա

02-ը փետրվարի 2012թ.

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԶՍԻ ՓՈՂՈՑ Ի ԹԻՎ 17 ՇԵՆՔԻ ԹԻՎ
8 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՏՎԱԾԸ ԱՌԱՆՋՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29-ը դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշումը և
ընդառաջելով Արփիմե Բաբայանի 27.01.2012թ. թիվ Բ-088 դիմումին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Արտաշատ քաղաքի Մարքսի փողոցի թիվ 17 թիվ 8 բնակարանի 13,8 քմ մակերեսով
սենյակը /համաձայն ներկայացված հատակագծի/ առանձնացնել որպես առանձին գույքային
միավոր և հասցեն համարել՝ ք.Արտաշատ, Մարքսի փողոց թիվ 17 շենք, թիվ 8 ա:



ՔԱՂԱՔԱՊԵՏԱՆ

ԿԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է

Անժնակալություն
(սեփականության կամ օգտագործման)

ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Խաչատրյան Վարդգես Բարսեղյան
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

Պալատ Բարսեղյան

Սերիբե Բարսեղյան

Սերբյանցի Բարսեղյան Վարդգես Կարգյան
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

քիմ 18 շենքեր 8 բնակարաններ ՆԿԱՏԱՄԱՐ

Սերբյանցի Բ. Վ. - /- 28.06.94 թ. N 21 որոշման
(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

«Սերբյանցի» Բնակարանային Կոոպերատիվ Ընդերային ՀԻՄԱՆ ՎՐԱ

13.12.11թ(ս - 6055) Ըստ օրենքի Խառանգ. Իրավունքի վկայագրի

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
03-001-4-11 ՄԱՅՅԱՆԻ 180 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ԿԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ, ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՄԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

ՂԵԿԱՎԱՐ Լ. Ս. Բարսեղյան
(ստորագրությունը)

Կ.Տ.

« 16 » _____ 12 _____ 20/թ.

2831786

Հավելված հ3

Հայաստանի Հանրապետության Կառավարության Արևիկ անշարժ գույքի

Կադաստրային պետական կոմիտեի նախագահի «28.12.2012» 374 Շ հրամանի


ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Ներքին Շենքային

Անուն Ազգանուն / անվանում /

Մարզ Ներքին Համայնք Ներքին Շենքային 172 8բշ

Մասշտաբ 1:100



2-րդ հարկ

$D=0.5$ $d=0.5 \div 0.1$

$H=2.9$ $h=2.7$

$S=13.8/5$

$S=57.4/5$

Կատարող

/ ստորագրություն /

Որակավորման վկայականի համարը

061

Անուն Ազգանուն /

տրման ամիս , ամսաթիվը

15.12.2014թ.

Հայաստանի Հանրապետություն քաղաք Արտաշատ
Երկու հազար ինը թվականի հոկտեմբերի քսանին

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքում մեզ համար գնելու բնակարան, իմ անունից որպես համասեփականատեր հանդես գալու անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում, նոտարական գրասենյակում, ՔԿԱԳ բաժնում, Բանկում, տեղական ինքնակառավարման մարմիններում, հարկային տեսչությունում, անհրաժեշտ այլ պետական և ոչ պետական հիմնարկություններում և կազմակերպություններում , տալու դիմումները, անելու հայտարարություններ, ստանալու և ներկայացնելու անհրաժեշտ փաստաթղթեր, կնքելու պայմանագրեր, կատարելու ինձ վերաբերվող ֆինանսական գործողություններ, ստորագրելու իմ փոխարեն ու կատարելու այն բոլոր գործողությունները, որոնք կապված են սույն հանձնարարությունների հետ: Ես վկայում եմ, որ գործողությունների մեջ սահմանափակված չեմ, իմ նկատմամբ չկա սահմանված խնամակալություն և հոգաբարձություն:

St. Paul, Kansas, August 10, 1892.

Գրանցված է սեղանամատյանում -----
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն ՀՀ <<Պետական
տուրքի մասին>> և <<Նոտարիատի մասին>> օրենքների -----

Ռ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՆՈՏԱՐԻԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՂՈՑ
НОТАРИАЛЬНЫЙ ДОКУМЕНТ
NOTARIAL DOCUMENT

ԻԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 19-Ա


02-ը փետրվարի 2012թ.

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՏԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՈԱԶՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՍԻՔ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անշարժ գույքի նկատմամբ առաջին պետական գրանցման նպատակով կադաստրային քարտեզագրման ընթացքում հայտնաբերվել է, որ Արտաշատ քաղաքի Աղայան փողոցի թիվ 4 տան բնակիչ Ռազմիկ Հովհաննիսյանը 800 քմ տնամերձ հողամասի փոխարեն օգտագործում է 1100 քմ: Ղեկավարվելով „Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, 10.06.2008թ. ՀՀ օրենքի և նույն օրենքի 05.06.2010թ. փոփոխությունների առաջին և երկրորդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 12.08.2010թ. թիվ 1004-Ն որոշման և հաշվի առնելով Արտաշատ քաղաքի Աղայան փողոցի թիվ 4 տան բնակիչ Ռազմիկ Հովհաննիսյանի կողմից քաղաքապետարան հասցեագրված 15.12. 2011թ. թիվ Հ-1572 դիմումը՝ ավել օգտագործվող տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Արտաշատ քաղաքի Աղայան փողոցի թիվ 4 տան բնակիչ Ռազմիկ Հովհաննիսյանի 4 շնչից բաղկացած ընտանիքին հողային քարտեզադրման և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշմամբ սեփականաշնորհված 800 քմ տնամերձից ավել օգտագործվող 300 քմ հողամասը անհատույց թողնել և ճանաչել սեփականության իրավունքը:
2. Նշված հողատարածքը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառական նշանակությամբ օգտագործելու համար, չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառական նշանակությամբ օգտագործմանը և ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման համար նախատեսված տարածքներում:
3. Տնամերձ հողամասի վրա մինչև 2001թ. մայիսի 15-ը ինքնակամ կառուցած շինությունները նշված օրենքի ուժով ճանաչվում են որպես սեփական գույք:
4. Նշված շինությունները կառուցված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, ինժեներատրանսպորտային օբյեկտների գոտիներում չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:
5. Հանձնարարել ՃԲՀ բաժնի գլխ.մասնագետ պրն. Ռ.Ավետիսյանին կատարելու համապատասխան փոփոխություններ հողային հաշվեկշռում:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը թեև քաղաքապետի տեղակալ պրն.Ի.Գրիգորյանի վրա:



ԳԱԳԻԿ ՍՈՒՐԱՂՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 20-Ա

02-ը փետրվարի 2012թ.

„ԱՐՏԱՇԱՏ ՊԼԱՋԱ,, ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23 ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 107 ԵՎ ԹԻՎ 105 Դ ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29-ը դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշումը և ընդառաջելով „Արտաշատ Պլազա,, ՍՊԸ-ի 02.02.2012թ. թիվ 159 գրությանը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

„Արտաշատ Պլազա,, ՍՊԸ-ին պատկանող Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 107 և թիվ 105 դ հասցեներում գտնվող շենք-շինությունները և հողատարածքը միավորել, ճանաչել մեկ գույքային միավոր և միավորված գույքի հասցեն համարել՝ ք.Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց թիվ 107:



ԳԱԳԻԳ ՄՈՒՐԱՂՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 21-Ա


03-ը փետրվարի 2012թ.

ՊԵՏ.ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՉՆԵԼՈՒ
ՍԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված սուբվենցիայից 6509680 /վեց միլիոն հինգ հարյուր ինը հազար վեց հարյուր ութսուն/ դրամը չի օգտագործվել և համաձայն 08.11.2011թ. ԱՎ-12 կնքված սուբվենցիայի պայմանագրի նշված չօգտագործված գումարը ենթակա է հետ վերադարձման պետ.բյուջե.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքապետարանի հաշվից 6509680 դրամը փոխանցել պետ.բյուջեի 9000013007019 գանձապետական հաշվին, որպես չօգտագործված գումար:
2. Հանձնարարել քաղաքապետարանի ՖՀՀ բաժնի պետ տիկին Լ.Նավասարդյանին կատարելու համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքապետի տեղակալ պարոն Ա.Շիրինյանի վրա:



ԳԱԳԻԿ ՍՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 22-Ա


03-ը փետրվարի 2012թ.

ԲԵՐԴԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԱՎՏՈԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ
ԳՈՒՄԱՐ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով քաղաքային համայնքի ավագանու 26.01.2012թ. թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

- 1.Քաղաքապետարանի հաշվից 8000 /ուր հազար/ դրամ փոխանցել Բերդիկի գյուղապետարանի 900415162032 գանձապետական հաշվին, որպես Ռ-աֆիկ թարվերոյանի կողմից սխալ վճարված գումար:
2. Հանձնարարել քաղաքապետարանի ՖՀՀ բաժնի պետ տիկին Լ.Նավասարդյանին կատարելու համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքապետի տեղակալ պարոն Ա.Շիրինյանի վրա:



ԳՍԳԻԿ ՍՈՒՐԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 23-Ա

03-ը փետրվարի 2012թ.

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԻՍԱԿՈՎ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 99/49 ԲՆԱԿԱՐԱՆԻ
ԲՆԱԿԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿՐՊԱԿ
ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդառաջելով Մ.Գրիգորյանի խնդրանքին /դիմում թիվ Գ-070, 23.01.2012թ./.



Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել Արտաշատ քաղաքի Իսակով փողոցի թիվ 99/49 բնակարանի բնակիչ Մ.Գրիգորյանին Իսակով փողոցի թիվ 72 շենքի հարևանությամբ տեղադրելու 20 քմ մակերեսով ժամանակավոր կրպակ:
2. Մ.Գրիգորյանը պարտավոր է՝
 - ա/ կրպակը տեղադրել քաղաքապետարանի կողմից տրված սխեմայի համաձայն.
 - բ/ պատշաճ մաքուր պահել կրպակի շրջակայքը.
 - գ/ ապամոնտաժել կրպակը քաղաքապետարանի առաջին իսկ պահանջի դեպքում՝ 5-օրյա ժամկետում:
3. Նշված պայմանները չկատարելու դեպքում սույն որոշումը համարել անվավեր:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել ՃԲՀ բաժնի պետ պրն. Կ.Պողոսյանի վրա:



ԳԱԳԵԿ ՍՈՒՐԱՅԱՆ


2006-07-11
9222222222



$\varphi = \psi$

427
DTS
FULTON

257374343



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 24-Ա

03-ը փետրվարի 2012թ.

2012թ. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՎՏՈՄԵԲԵՆԱՅԻ ԲԵՆՁԻՆԻ ՉԵՈՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ, ՏԵՆԻՆԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԳՆՄԱՆ ՉԵՎԻ ԱՌԱՋԱՐԿԸ, ՄԻՅՈՒՅԹԻ ԿԱՄ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՆՁԱՆՑ /ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ/ ԸՆԴԳՐԿԵԼԸ, ԳՆՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված „Գնումների առարկայի բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և գնումների ֆինանսավորման,, կարգով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հաստատել 2012թ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից համայնքային բյուջեով նախատեսված քաղաքապետարանին սպասարկող ավտոմեքենայի բենզինի ձեռքբերման նպատակով անհրաժեշտ գնումների համար գնման նախահաշվային փաստաթղթերը, տեխնիկական բնութագիրը /հավելված թիվ 1/, աշխատանքների գնման ձևի առաջարկը /հավելված թիվ 2/, մրցույթի կամ առաջարկներ գնահատող հանձնաժողովի կազմում անձանց /թեկնածուներ/ ընդգրկելը /հավելված թիվ 3/, գնման և վճարման ժամանակացույցերը /հավելված թիվ 4, թիվ 5/:



ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Արտաշատի քաղաքապետի


03.02.2012 թ. 24-Ա որոշման

2012 թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող ավտոմեքենայի համար բենզինի ձեռքբերման նպատակով գնման աշխատանքների նախահաշվային , տեխնիկական բնութագրերի, աշխատանքների գնման ձևի առաջարկության մասին:

2012թ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող ավտոմեքենայի համար բենզինի ձեռքբերման նպատակով գնման աշխատանքների համար Արտաշատ քաղաքի համայնքային բյուջեով նախատեսվել է 1 260 000 ՀՀ դրամ:

Առաջարկվում է 2012 թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող ավտոմեքենայի համար բենզինի ձեռքբերման նպատակով աշխատանքների գնումը „Գնումների մասին„ ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն իրականացնել պարզեցված ընթացակարգի գնման ձևով:

Արտաշատի քաղաքապետ



2012 թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող ավտոմեքենայի համար բենզինի ձեռքբերման նպատակով գնման աշխատանքներ:

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Աշխատանքի անվանումը.----- 2012 թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող ավտոմեքենայի համար բենզինի ձեռքբերման նպատակով գնման աշխատանքներ:
- 1.2.Նշանակությունը./ խնդիրը / ----- բենզինի ձեռքբերում:
- 1.3.Ֆինանսավորման աղբյուրը --2012թվ. Արտաշատ քաղաքի համայնքային բյուջե
- 1.4.Աշխատանքների ժամկետը --սկիզբ մարտ 2012թվ. ---ավարտ դեկտեմբեր 2012թվ,
- 1.5.Պատվիրատուն .---- Արտաշատի քաղաքապետարան

2. Տեխնիկական բնութագրեր

- 2.1.Նախատեսվում է իրականացնել 2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի համայնքային բյուջեով ընդգրկված քաղաքապետարան-ին սպասարկող ավտոմեքենայի համար բենզինի ձեռքբերման նպատակով գնման աշխատանքներ:

3. Նախահաշվային առաջադրանք

- 3.1.Նախահաշվային փաստաթղթեր
- 3.2.Աշխատանքի տեսակը .--- բենզինի ձեռքբերում:
- 3.3.Հատուկ պահանջներ.-- Ուսումնասիրել Արտաշատ քաղաքի քաղաքապետարանը սպասարկող ավտոմեքենայի համար բենզինի ձեռքբերման նպատակով գնման աշխատանքների պայմանները, որի հիման վրա պատվիրատուի հետ լրացուցիչ համաձայնեցրել նախահաշվարկային առաջադրանքը, պահանջները և տեխնիկական պարամետրերը:

Արտաշատի քաղաքապետ





Արտաշատի քաղաքապետ

Գ.Սուրադյան

ԳԼՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՆԹԱՅԻՆ

1. Գնման առարկա է հանդիսանում 2012 թվականին Արտաշատի քաղաքապետարանին սպասարկող ավտոմեքենայի համար բենզինի ձեռքբերումը:

Ապրանքի անվանումը – Ռեգուլյար բենզին	
Տեխնիկական կանոնակարգ - Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի թիվ 894-Ն որոշում	
Ցուցանիշի անվանումը	Նորմը
1. Ճայթյունակայունությունը.	
- օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով, ոչ պակաս.	91
- օկտանային թիվը որոշված շարժիչային մեթոդով, ոչ պակաս.	81
2. Կապարի պարունակությունը, մգ/դմ ³ , ոչ ավելի.	5
3. Խտությունը 15 °C ջերմաստիճանում, կգ/մ ³	720-775
4. Ծծմբի պարունակությունը, մգ/կգ, ոչ ավելի	10
5. Ածխաջրածինների ծավալային մասը, %, ոչ ավելի.	
- արոմատիկ	35,0
- օլեֆիններ	21,0
6. Բենզոլի ծավալային մասը, %, ոչ ավելի.	1,0
7. Թթվածնի զանգվածային մասը, %, ոչ ավելի.	2,7
8. Օքսիդիչների ծավալային մասը, %, ոչ ավելի.	
- մեթանոլ	3,0
- էթանոլ	5,0
- իզոպրոպիլ սպիրտ	10,0
- իզոբութիլ սպիրտ	10,0
- եռաբութիլ սպիրտ	7,0
- եթերներ (C5 և ավելի)	15,0
- այլ օքսիդիչներ	10,0
Այլ բնութագրիչներ	
9. Պայմանական նշանները	„Վախենում է կրակից,“
10. Տեղափոխման անվտանգությունը	Հրավտանգ
1. Տեսքը	Մաքուր և պարզ
2. Քանակը	2800
3. Չափման միավորը	Լիտր
4. Մատակարարումը	Կտրոնային

Պատասխանատու ստորագրածանման ղեկավար՝

Ա.Իսրայելյան

Հավելված N3

Արտաշատի քաղաքապետի


03.02 2012 N 24-Ա որոշման

2012 թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող ավտոմեքենայի համար բեռնափոխման նպատակով գնման աշխատանքների պատասխանատու ստորաբաժանման անդամների կողմից անձանց առաջադրվող մրցույթի կամ առաջարկները գնահատող հանձնաժողովի / այսուհետև հանձնաժողով/ կազմում անձանց /թեկնածուների/ ընդգրկվելու մասին:

2012 թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող ավտոմեքենայի համար բեռնափոխման նպատակով գնման աշխատանքների պատասխանատու ստորաբաժանման անդամների կողմից առաջադրվել են՝

- Ա.Շիրինյան ----- առաջարկները գնահատող հանձնաժողովի նախագահ
Ղ.Հարությունյան ----- առաջարկները գնահատող հանձնաժողովի անդամ
Ռ. Օհանյան ----- առաջարկներ գնահատող հանձնաժողովի անդամ
Հ.Հովհաննիսյան --- առաջարկներ գնահատող հանձնաժողովի քարտուղար

Արտաշատի քաղաքապետ



Հավելված N 4

Արտաշատի քաղաքապետի


03.02.2012 N 24-Ա որոշման

Գ Ն Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

2012 թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող
ավտոմեքենայի բենզինի ձեռքբերման նպատակով գնման աշխատանքների

№/հ	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է գնել 2012թվականին	Ընդհանենը ՀՀ դրամ
1.	2012 թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող ավտոմեքենայի բենզինի ձեռքբերման նպատակով գնման աշխատանքներ:	2012թվ.-ի համար	1 260 000 ՀՀ դրամ

Արտաշատի քաղաքապետ



Հավելված N 5

Արտաշատի քաղաքապետի

03.02.2012 N 24-Ա որոշման


Կ Ճ Ա Ր Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

2012 թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող
ավտոմեքենայի բենզինի ձեռքբերման նպատակով գնման աշխատանքների

№	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է վճարել 2012թվականին	Ընդհանենը ՀՀ դրամ
	2012 թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի քաղաքապետարան-ին սպասարկող ավտոմեքենայի բենզինի ձեռքբերման նպատակով գնման աշխատանքներ:	2012թվականի համար	1 260 000 ՀՀ դրամ

Արտաշատի քաղաքապետ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 25-Ա


08-րդ փետրվարի 2012թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով „ՄԻՍ ԵՎ ԱՐԱՐԱՏ„ ՍՊԸ-ի հայտը և ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Թույլատրել „ՄԻՍ ԵՎ ԱՐԱՐԱՏ„ ՍՊԸ-ին Երևան-Երասխա մայրուղու ձախ կողմում գտնվող հանրային սննդի օբյեկտում - 01.01.2012-31.12.2012 թ. ժամանակահատվածում զբաղվելու ոգելից խմիչքների վաճառքով:



ԳԱԳԻԿ ՍՈՒՐԱՂՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 26-Ա

08-ը փետրվարի 2012թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սուսաննա Միքայելյանի հայտը և
դեկլարավելով „Տեղական ինքնակառավարման մասին“, ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ
կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Թույլատրել Աճ Սուսաննա Միքայելյանին Արտաշատ քաղաքի Մարքսի փողոցի թիվ 6/37
ա հասցեում գտնվող հիմնական խանութում - 01.01.2012-31.12.2012 թ. ժամանակահատվածում
զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքով:



ՔԱՂԱՔԱՊԵՏԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 27-Ա


08-ք փեարվարի 2012թ.

2012թ. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՌՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՉԵՌՔԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆՄԱՆ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԳՆՄԱՆ ՉԵՎԻ ԱՌԱՋԱՐԿԸ, ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՄ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՆՁԱՆՑ /ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ/ ԸՆԴԳՐԿԵԼԸ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԳՆՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված „Գնումների առարկայի բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և գնումների ֆինանսավորման,, կարգով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հաստատել 2012թ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից համայնքային բյուջեով նախատեսված քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով անհրաժեշտ գնումների համար գնման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, տեխնիկական բնութագիրը /հավելված թիվ 1/, աշխատանքների գնման ձևի առաջարկը /հավելված թիվ 2/, մրցույթի կամ առաջարկներ գնահատող հանձնաժողովի կազմում անձանց /թեկնածուներ/ ընդգրկելը /հավելված թիվ 3/, աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաների ցանկը /հավելված թիվ 4/, գնման և վճարման ժամանակացույցները /հավելվածներ թիվ 5, թիվ 6/:



ԳԱԳԻԿ ՍՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 1


Արտաշատի քաղաքապետի
08.02.2012 N 27-Ա որոշման

2012թ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական բնութագրերի, գնման ձևի առաջարկության մասին:

2012թ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների համար քաղաքի համայնքային բյուջեով նախատեսվել է 10 000 000 ՀՀ դրամ:

Առաջարկվում է վերոհիշյալ աշխատանքների գնումը „Գնումների մասին „ ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն իրականացնել պարզեցված ընթացակարգի գնման ձևով:

Արտաշատի քաղաքապետ



Գ. Մուրադյան

Արտաշատի քաղաքապետի
08.02.2012 N 27-Ա որոշման

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Աշխատանքի անվանումը --- 2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ

1.2. Նշանակությունը./խնդիրը/ -- արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում

1.3. Ֆինանսավորման աղբյուրը -- 2012թվ. Արտաշատ քաղաքի համայնքային բյուջե

1.4. Աշխատանքների ժամկետը -- սկիզբ մարտ 2012թվ. -- ավարտ դեկտեմբեր 2012թվ.

1.5. Պատվիրատուն -- Արտաշատի քաղաքապետարան

2. Տեխնիկական բնութագրեր

2.1. Նախատեսվում է իրականացնել ---- ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ

3. Նախագծա - Նախահաշվային առաջադրանք

3.1. Նախագծա - նախահաշվային փաստաթղթեր

3.2. Աշխատանքի տեսակը. -- քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ:

3.3. Հատուկ պահանջներ. -- ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ Արտաշատ քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների պայմանները, որի հիման վրա պատվիրատուի հետ լրացուցիչ համաձայնեցրել նախահաշվարկային առաջադրանքը, պահանջները և տեխնիկական պարամետրերը

Արտաշատի քաղաքապետ


Գ. Սուրանյան

հավելված N3

Արտաշատի քաղաքապետի
08.02.2012 N 24-Ա որոշման

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների համար պատասխանատու ստորաբաժանման անդամների կողմից առաջադրվող մրցույթի կամ առաջարկները գնահատող հանձնաժողովի /այսուհետև հանձնաժողով/ կազմում անձանց /թեկնածուների/ ընդգրկվելու մասին:


2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների համար պատասխանատու ստորաբաժանման անդամների կողմից գնահատող հանձնաժողովում առաջադրվել են՝

- Ա.Շիրինյան ----- առաջարկներ գնահատող հանձնաժողովի նախագահ
- Ղ.Հարությունյան ---- առաջարկներ գնահատող հանձնաժողովի անդամ
- Ռ. Օհանյան ----- առաջարկներ գնահատող հանձնաժողովի անդամ
- Հ.Հովհաննիսյան --- առաջարկներ գնահատող հանձնաժողովի քարտուղար

Արտաշատի քաղաքապետ



Գ.Մուրադյան



Հավելված N 4

Արտաշատի քաղաքապետի
08 02 2012 N 27.Ա որոշման

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաների ցանկի մասին:


Առաջարկվում է քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիան հետևյալն է ---

Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտների՝


- բնակելի, հասարակական և արտադրական;
- էներգետիկ.

կամ Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն:

Արտաշատի քաղաքապետ



Գ. Մուրադյան



Արտաշատի քաղաքապետի
 08.02.2012 N 27-Ա որոշման

Գ Ն Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների

Ը/Դ	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է գնել 2012թվ.	Ընդհանենը ՀՀ դրամ
1.	2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ	2012թվ. տարվա համար	10000000 ՀՀ դրամ

Արտաշատի քաղաքապետ



Գ.Մուրադյան



ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների

h/h	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է վճարել 2012թվ.	Ընդհանենը ՀՀ դրամ
1.	2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ	2012թվ. տարվա համար	10 000 000 ՀՀ դրամ

Արտաշատի քաղաքապետ



Գ.Մուրադյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 28-Ա

08-ը փետրվարի 2012թ.

2012թ. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԳՆՄԱՆ ՁԵՎԻ ԱՌԱՋԱՐԿԸ, ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՄ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՆՁԱՆՑ /ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ/ ԸՆԴԳՐԿԵԼԸ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԳՆՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված „Գնումների առարկայի բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և գնումների ֆինանսավորման„ կարգով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Հաստատել 2012թ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից համայնքային բյուջեով նախատեսված քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով անհրաժեշտ գնումների համար գնման նախահաշվային փաստաթղթերը, տեխնիկական բնութագիրը /հավելված թիվ 1/, աշխատանքների գնման ձևի առաջարկը /հավելված թիվ 2/, մրցույթի կամ առաջարկներ գնահատող հանձնաժողովի կազմում անձանց /թեկնածուներ/ ընդգրկելը /հավելված թիվ 3/, աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաների ցանկը /հավելված թիվ 4/, գնման և վճարման ժամանակացույցները /հավելվածներ թիվ 5, թիվ 6/:



Հավելված N 1

Արտաշատի քաղաքապետի

08.02.2012 N 28-Ձ որոշման


2012թ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների տեխնիկական բնութագրերի, գնման ձևի առաջարկության մասին:

2012թ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների համար քաղաքի համայնքային բյուջեով նախատեսվել է 3 600 000 ՀՀ դրամ:

Առաջարկվում է վերոհիշյալ աշխատանքների գնումը „Գնումների մասին „ ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն իրականացնել պարզեցված ընթացակարգի գնման ձևով:

Արտաշատի քաղաքապետ

[Handwritten signature]



Գ. Մուրադյան

Արտաշատի քաղաքապետի
02.02.2012 N 28-Ն հրոշման

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Աշխատանքի անվանումը --- 2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ

1.2. Նշանակությունը./խնդիրը/ --- արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում:

1.3. Ֆինանսավորման աղբյուրը -- 2012թվ. Արտաշատ քաղաքի համայնքային բյուջե

1.4. Աշխատանքների ժամկետը --- սկիզբ մարտ 2012թվ. -- ավարտ դեկտեմբեր 2012թվ.

1.5. Պատվիրատուն -- Արտաշատի քաղաքապետարան

2. Տեխնիկական բնութագրեր

2.1. Նախատեսվում է իրականացնել ---- ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ


3. Նախագծա - Նախահաշվային առաջադրանք

3.1. Նախագծա - նախահաշվային փաստաթղթեր

3.2. Աշխատանքի տեսակը -- քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ:

3.3. Հատուկ պահանջներ. -- Ուսումնասիրել Արտաշատ քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների պայմանները, որի հիման վրա պատվիրատուի հետ լրացուցիչ համաձայնեցրել նախահաշվարկային առաջադրանքը, պահանջները և տեխնիկական պարամետրերը:

Արտաշատի քաղաքապետ



Հավելված N3


Արտաշատի քաղաքապետի
08.02.2012 N 28-Ա որոշման

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների համար պատասխանատու ստորաբաժանման անդամների կողմից առաջադրվող մրցույթի կամ առաջարկները գնահատող հանձնաժողովի /այսուհետև հանձնաժողով/ կազմում անձանց /թեկնածուների/ ընդգրկվելու մասին:

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների համար պատասխանատու ստորաբաժանման անդամների կողմից գնահատող հանձնաժողովում առաջադրվել են՝

Ա.Շիրինյան ----- առաջարկները գնահատող հանձնաժողովի նախագահ
Ղ.Հարությունյան ----- առաջարկները գնահատող հանձնաժողովի անդամ
Ռ. Օհանյան ----- առաջարկներ գնահատող հանձնաժողովի անդամ
Հ.Հովհաննիսյան --- առաջարկներ գնահատող հանձնաժողովի քարտուղար

Արտաշատի քաղաքապետ



Արտաշատի քաղաքապետի

08.02.2012 N 28-Ձ որոշման

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաների ցանկի մասին:


Առաջարկվում է քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիան հետևյալն է ---

Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտների՝

---էներգետիկ.

---կամ Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն:

Արտաշատի քաղաքապետ




Գ Ն Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների

h/h	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է գնել 2012թվ.	Ընդհանենը ՀՀ դրամ
1.	2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ	2012թվ. տարվա համար	3 600 000 ՀՀ դրամ

Արտաշատի քաղաքապետ




ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2012թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների

h/h	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է վճարել 2012թվ.	Ընդհանենը ՀՀ դրամ
1.	2011թվ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի կողմից քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ	2012թվ. տարվա համար	3 600 000 ՀՀ դրամ

Արտաշատի քաղաքապետ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 29-Ա

08-ը փետրվարի 2012թ.

„ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ,, ՀՈԱԿ-ԻՆ
ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Հուղարկավորման ծառայություններ,, ՀՈԱԿ-ի հետ գումար փոխանցելու մասին 05.05.2009թ. թիվ 16 կնքված պայմանագրի, հաշվի առնելով Արտաշատ քաղաքի Դուրյան փողոցի թիվ 12 շենքի թիվ 54 բնակարանի բնակիչ Նվեր Մարկոսյանի, Իսակով փողոցի թիվ 72 ա շենքի թիվ 10 բնակարանի բնակչուհի Մելինե Հովհաննիսյանի, Մանուշյան փողոցի թիվ 12 տան բնակիչ Արայիկ Հովհաննիսյանի, Օգոստոսի 23 փողոցի թիվ 70 բնակարանի բնակչուհի Նարինե Մարգարյանի և Արազի փողոցի թիվ 1 շենքի թիվ 45 բնակարանի բնակչուհի Նարինե Մեջլումյանի ընտանիքների տնտեսական ծանր վիճակը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. 4726 „Հուղարկավորման նպաստներ բյուջեից հոդվածից 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ փոխանցել „Հուղարկավորման ծառայություններ,, ՀՈԱԿ-ին Նվեր Մարկոսյանի մոր՝ Արտաշատ քաղաքի Դուրյան փողոցի թիվ 12 շենքի թիվ 54 բնակարանի բնակչուհի Եղսապետ Մարկոսյանի սզո արարողության ծախսերի համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ, Մելինե Հովհաննիսյանի մոր՝ Արտաշատ քաղաքի Իսակով փողոցի թիվ 72 ա շենքի թիվ 10 բնակարանի բնակչուհի Սարվի Հովհաննիսյանի սզո արարողության ծախսերի համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ, Արայիկ Հովհաննիսյանի մոր՝ Արտաշատ քաղաքի Մանուշյան փողոցի թիվ 12 տան բնակչուհի Արմենուհի Մարգարյանի սզո արարողության ծախսերի համար՝ 30000 /երեսուն հազար/դրամ, Նարինե Մարգարյանի մոր՝ Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 70 բնակարանի բնակչուհի Քնարիկ Արշակյանի սզո արարողության ծախսերի համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ և Նարինե Մեջլումյանի սկեսրոջ՝ Արտաշատ քաղաքի Արազի փողոցի թիվ 1 շենքի թիվ 45 բնակարանի բնակչուհի Վարսիկ Աթոյանի սզո արարողության ծախսերի համար՝ 45000 /քառասունհինգ հազար/ դրամ:

2. Հանձնարարել քաղաքապետարանի ֆինանսական և հաշվապահական հաշվառման բաժնի պետ տիկին Լ.Նավասարդյանին կատարելու համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքապետի տեղակալ պրն. Ա.Շիրինյանի վրա:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 30-Ա

10-րդ փետրվարի 2012թ.

ԱՐՏԱՇԱՏ ՀԱԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԸ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10-րդ նոյեմբերի 2011թ.
թիվ 1582-Ն որոշման 3-րդ կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով Արտաշատ համայնքում ֆիզիկական
և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով՝ համաձայն
հավելված 1-ի:

2. Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական
անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն
հավելված 2-ի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ
Խ.Գրիգորյանի վրա:



ԳԱԳԻԿ ՍՈՒՐԱՂՅԱՆ

Հավելված թիվ 1
Արտաշատի համայնքի ղեկավարի
10.02.2012թ. թիվ 30-Ա որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ձ Մ

Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց
պատճառված վնասները գնահատող Արտաշատ համայնքի համայնքային հանձնաժողովի

1. Գ.Մուրադյան - համայնքի ղեկավար, հանձնաժողովի նախագահ
2. Իս.Գրիգորյան - համայնքի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
3. Ա.Հակոբյան - համայնքի ՔՊ հարցերի պատասխանատու, հանձնաժողովի անդամ
4. Ա.Ավետիսյան - աշխատակազմի քարտուղար, ”
5. Կ.Պողոսյան - ՃԲՀ բաժնի պետ, ”
6. Ա.Իսրայելյան - ԲԿՏՏԱՍ բաժնի պետ, ”
7. Լ.Նավասարդյան - ՖՀՀ բաժնի պետ, ”
8. Ա.Խաչատրյան - ՍՀԾ բաժնի պետ, ”
9. Ռ.Ավետիսյան - ՃԲՀ բաժնի գլխավոր մասնագետ, ”
10. Վ.Հովհաննիսյան - „Արտաշատ պոլիկլինիկա,, ՓԲԸ բժիշկ, ”

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



/Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆ/

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց
պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովի

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց
պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովը /այսուհետ՝
հանձնաժողով/ հանդիսանում է Արտաշատի համայնքում արտակարգ իրավիճակների
հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման
ուղորդում /այսուհետ՝ ուղորդ/ համակարգող խորհրդակցական մարմին:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:
3. Հանձնաժողովին կից՝ հանձնաժողովի անդամների կողմից լիազորված
ներկայացուցիչների ընդգրկմամբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հանձնաժողովի խնդիրներն են՝

- 1) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց
պատճառված վնասների գնահատման բնագավառում պետական քաղաքականության
